ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 480-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2017.05.20/30(1305).1 Հոդ.486.7	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	04.05.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	12.05.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	21.05.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2017 թվականի N 480-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու և 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1228-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում, 1-ին կետում, հավելվածի վերնագրում և 1-ին կետում «ֆինանսների նախարարության» բառերը փոխարինել «կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի» բառերով.

2) որոշման վերնագրից, 1-ին կետից, հավելվածի վերնագրից, 1-ին և 2-րդ կետերից, որոշման հավելվածի 3-րդ կետով սահմանված տեղեկատվության ձևի վերնագրից հանել «սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի» բառերը.

3) որոշման հավելվածի 1-ին կետից հանել «(այսուհետ՝ նախարարություն)» բառերը, 2-րդ, 3-րդ կետերում «նախարարությունը» բառը փոխարինել «կոմիտեն» բառով, իսկ 4-րդ կետում «նախարարությանը» բառը՝ «կոմիտեին» բառով.

4) որոշման հավելվածի 2-րդ կետում՝

ա. «Բացթողում՝ ներքին սպառման համար» բառերից հետո լրացնել «, «Մաքսային տարանցում»» բառերով,

բ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1211-Ն որոշման հավելվածի N 1 աղյուսակի,» բառերը հանել.

5) որոշման հավելվածի 3-րդ կետում «ձևի» բառը փոխարինել «NN 1 և 2 ձևերի» բառերով.

6) որոշման հավելվածի ձևը «Ձև» բառից հետո լրացնել «N 1» թվով, վերնագիրը «ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ» բառերից հետո լրացնել «ԲԱՑԹՈՂՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ» ԵՎ «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ» բառերով, ինչպես նաև աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր սյունակով.

«Ապրանքի ներմուծման սահմանային անցման կետը».

7) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 2 ձևով.

«Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 _____ ԹՎԱԿԱՆԻ _____ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Ապրանք տեղափոխող անձի անունը, ազգանունը, ներմուծող իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը	Ներմուծված ապրանքի անվանումը (առկայության դեպքում)	Արտահանման երկիրը	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկով (ԱՏԳ ԱԱ) ծածկագիրը (նվազագույնը առաջին վեց նիշերով)	Ապրանքի քանակը (քաշը, ծավալը)	Մաքսային հայտարարագրի համարը և ամսաթիվը	Հարկ վճարողի հաշվի համարը(ՀՎՀՀ) (առկայության դեպքում)	Ապրանքի ներմուծման սահմանային անցման կետը
1	2	3	4	5	6	7	8	9

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Կ. Կարապետյան

2017 թ. մայիսի 12
Երևան